ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
**ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY
**FOUNDATION**

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«25» 05 2026թ.

№ 04/Ռ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ

**ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակից «Իրինա Մելքոնյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի համարը | չափաբաժնի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/39 | 30 | Ուսումնական պարապմունքների մատյան | 450000 | «Իրինա Մելքոնյան» ԱՁ | 32523869 | ք.Երևան, Շերամի 47 շ. բն. 28 | 05.05.2026թ. | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ | «Իրինա Մելքոնյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էին անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ «Իրինա Մելքոնյան» ԱՁ-ի կողմից ներկայացված «Լիազորագիր 35» փաստաթղթի բովանդակությունը թերի է և չի ապահովում դրա բովանդակության հստակ ընկալումը: Դրանով պայմանավորված և հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, 2026 թվականի ապրիլի 29-ին Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Այնուհետև՝ 2026 թվականի մայիսի 05-ին գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իրինա Մելքոնյան» ԱՁ-ի կողմից թերի են ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները, դրանով թույլ տալով գնման գործընթացում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | կողմից ներկայացված «Լիազորագիր 35» փաստաթուղթը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: |

**ՌԵԿՏՈՐ՝** **Հ. ՋԱՔՈՅԱՆ**